ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԽՈՍՆԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄԱՍԻՆ

23.02.2016 19:28

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մամուլի խոսնակի հաստիքը 2016 թվականի մարտի 1-ից թափուր է լինելու։

ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակի թեկնածուների հետ հարցազրույց անցկացնելու համար առաջարկում ենք մինչև 2016 թվականի փետրվարի 29-ը ժամը 15.00-ն adviser@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել Ձեր ինքնակենսագրականը։ Հարցազրույցն անցկացնելու է ձևավորված հանձնաժողովը (Զինավոր Մեղրյան, Իրինա Փիլոյան և Մանե Կարապետյան)։ Հարցազրույցի ժամանակ ստուգվելու են թեկնածուների համար սահմանված հետևյալ նվազագույն պահանջները.

1. **Աշխատանքային փորձ**՝ առնվազն երեք տարի հասարակայնության հետ կապերի կամ լրատվության ոլորտում.
2. **Կրթություն**՝ բարձրագույն (իրավագիտություն, լրագրություն, պատմագիտություն, հանրային կառավարում).
3. **Համակարգչային հմտություններ**՝ MS World, MS Excel, MS PowerPoint, Photoshop, կայքէջի կառավարման CMS ծրագիր, ինտերնետի ռեսուրսներից օգտվելու հնարավորություն
4. **Գրավոր տեքստերի,** այդ թվում՝ վերլուծական նյութերի կազմման հմտություններ.
5. **Բանավոր** հռետորական խոսքին տիրապետելու ունակություն։

ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակի հիմնական գործառույթներն են՝

- ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական տեսակետները Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների զանգվածային լրատվության և տեղեկատվության փոխանակման միջոցներին.
- լուսաբանել ՀՀ փաստաբանների պալատի և հանրային պաշտպանի գրասենյակի գործունեությունը.
- կազմակերպել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի հարցազրույցները, հանդիպումները լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ, կազմակերպել և/կամ անցկացնել ասուլիսները.
- փաստաբանների, այդ թվում՝ հանրային պաշտպանների համար կազմակերպել ասուլիսներ, օժանդակել լրատվամիջոցների հետ աշխատելու հարցում.
- կազմել մամլո հաղորդագրությունները և այլ տեղեկատվական նյութեր, կազմակերպել տեղեկատվական բնույթի միջոցառումներ.
- իրականացնել ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջի և սոցիալական ցանցի էջի ընթացիկ սպասարկում, ներառյալ՝ նյութերի (լուրերի, նորությունների, հայտարարությունների, իրավական ակտերի կամ այլ նյութերի) ներբեռնում և կայքէջի բնականոն գործողության համար անհրաժեշտ այլ գործողություններ և այլն։

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ

Առաջարկվող նորություններ

03.03.2016ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԽՈՍՆԱԿԻ ԹԱՓՈՒՐ ՀԱՍՏԻՔԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՐՑԱՔՐՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })